ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

N 402-Ա **14 սեպտեմբերի 2016 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅՈՒՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵԼՈՒ ԵՎ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ 728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետի 2015 թվականի դեկտեմբերի 18-ի N 348-Ա որոշման հավելվածով հաստատված «Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության համակարգի նախապատրաստման 2016 թվականի հիմնական միջոցառումների պլան»-ի 10.1.1 կետը

որոշում եմ՝

1. 2016 թվականի հոկտեմբերի 12-ին՝ իմ ղեկավարությամբ, անցկացնել շտաբային ուսումնավարժություն «Բնակչության պաշտպանության կազմակերպումը Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Այգուտ և Դպրաբակ համայնքներում՝ սողանքների ակտիվացման ժամանակ» թեմայով:

2. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի կազմը՝ համաձայն N 1 հավելվածի.

2). Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության միջնորդական խմբի կազմը՝ համաձայն N 2 հավելվածի.

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանը՝ համաձայն N 3 հավելվածի:

3. Ուսումնավարժությանը ներգրավել՝

1) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմին.

2) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակների մշտական հանձնաժողովին.

3) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության տարահանման հանձնաժողովին.

4) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչությանը.

5) Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոօդերևութաբանության և մթնոլորտային երևույթների վրա ակտիվ ներգործության ծառայության մարզային ստորաբաժանմանը.

6) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Այգուտ համայնքի ղեկավար կազմին.

7) Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Դպրաբակ համայնքի ղեկավար կազմին:

4. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզում անցկացվող շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարար ծառայության Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ, փ/ծ գնդապետ Էդիկ Գալստյանին՝

1) ապահովել շտաբային ուսումնավարժության նախապատրաստման ու անցկացման փաստաթղթերի ժամանակին մշակումը և հաստատման ներկայացումը՝ համաձայն շտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

2) կազմակերպել շտաբային ուսումնավարժության մասնակիցների նախապատրաստումը՝ համաձայն շտաբային ուսումնավարժության նախապատրաստման օրացուցային պլանի.

3) համապատասխան մասով ճշգրտել «Արտակարգ իրավիճակներում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի բնակչության պաշտպանության կազմակերպման պլան»-ը.

4) շտաբային ուսումնավարժությանը պատրաստ լինելու մասին զեկուցել ինձ մինչև 2016 թվականի հոկտեմբերի 6-ը.

5) շտաբային ուսումնավարժության անցկացումից հետո, 5-օրյա ժամկետում, ներկայացնել արդյունքների ամփոփման արձանագրությունը:

5.Շտաբային ուսումնավարժության մասնակիցներին՝

1) ճշգրտել համապատասխան պլանները.

2) շտաբային ուսումնավարժությանը նախապատրաստվելու հարցերով սերտորեն համագործակցել շտաբային ուսումնավարժության ղեկավարման շտաբի հետ.

3) պատրաստ լինել զեկուցելու շտաբային ուսումնավարժության ընթացքում կատարած միջոցառումների մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ՌԱՖԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Հավելված N 1
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016թ. սեպտեմբերի 14-ի
N 402-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ՇՏԱԲԻ

ՀՀ	Պաշտոնը ղեկավարման շտաբում	փ/ծ կոչում Անուն Ազգանուն	Զբաղեցրած հաստիքային պաշտոնը
1	ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետ	փ/ծ գնդապետ Է. Գալստյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետ
2	ուսումնավարժության ղեկավարման շտաբի պետի տեղակալ	փ/ծ փոխգնդապետ Հ.Աբրահամյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ, ՃԿԿ պետ
		Խաղարկման խումբ	
3	խմբի պետ	փ/ծ մայոր Դ. Մանուկյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
4	խմբի անդամ	փ/ծ կապիտան Վ. Գորոյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ
5	խմբի անդամ	փ/ծ փոխգնդապետ Ռ. Օհանյան	Գեղարքունիքի ՄՓՎ Ճամբարակի թիվ 36 հրշեջ փրկարարական ջոկատի հրամանատար
		Վերլուծման խումբ.	
6	խմբի պետ	փ/ծ մայոր Գ. Հակոբյան	Գեղարքունիքի մարզային փրկարարական վարչության պետի տեղակալ
7	խմբի անդամ	փ/ծ մայոր Ա. Առաքելյան	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ
8	խմբի անդամ	փ/ծ ավագ լեյտենանտ Ա. Սիմոնյան	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 2
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016թ. դեկտեմբերի 14-ի
N 402-Ա որոշման

ԿԱԶՄ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԱՆՑԿԱՑՎՈՂ ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԻՋՆՈՐԴԱԿԱՆ ԽՄԲԻ

ՀՀ	Ուսումնավարժությանն ընդգրկված մասնակիցները	միջնորդներ	
		պաշտոնը	Ազգանուն անուն
	Մարզային տարահանման հանձնաժողով	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի պետ վարչության պետի տեղակալ	Գ. Հակոբյան
1	ՀՀ ոստիկանության Գեղարքունիքի մարզային վարչություն, «ԱրմենՏել» ՓԲԸ Գավառի ՀՏԿ, «ՀԷՑ» ՓԲԸ «Գեղամա» մասնաճյուղ	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի հրահանգիչ	Վ. Գորոյան
2	Մարզպետարանի աշխատակազմի քաղաքաշինության վարչություն, տրանսպորտի բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ	Դ. Մանուկյան
3	Մարզպետարանի աշխատակազմի առողջապահության և սոցիալական ապահովության վարչություն, հասարակության հետ կապերի բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ	Ա. Սիմոնյան
4	Մարզպետարանի աշխատակազմի ՏԻՄ և ՀԳՄՏՍ վարչություն, բնակարանային և ենթակառուցվածքների գործունեության բաժին	Գեղարքունիքի ՄՓՎ ճգնաժամային կառավարման կենտրոնի ավագ հրահանգիչ	Ա. Առաքելյան
5	Մարզպետարանի աշխատակազմի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման, գյուղատնտեսության և բնապահպանության վարչություններ,	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի հրահանգիչ	Գ. Միրիբյան
6	Այգուտ, Դպրաբակ համայնքներ, ՀՀ ԱԻՆ հիդրոօդերևութաբանական ծառայության մարզային ստորաբաժանում,	Գեղարքունիքի ՄՓՎ բնակչության պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ	Հ. Հակոբյան

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ

Հավելված N 3
ՀՀ Գեղարքունիքի մարզպետի
2016թ. սեպտեմբերի 14-ի
N 402-Ա որոշման

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ՊԼԱՆ
ՇՏԱԲԱՅԻՆ ՈՒՍՈՒՄՆԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Կատարման ժամկետներ	Պատասխանատու կատարողներ	Նշում կատարման մասին
1	2	3	4	5
	I. Փաստաթղթերի մշակում			
1.	Ելակետային տվյալների որոշում՝ մասնակիցների կազմ, մտահղացում, անցկացման կարգ	Մինչև 14.09	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբ	
2.	Մտահղացման մշակում (սխեմա, բացատրագիր)	Մինչև 15.09	Ղեկավարման շտաբ	
4.	ՇՈՒ անցկացման պլանի մշակում	Մինչև 14.09	Ղեկավարման շտաբ	
6	ՇՈՒ իրավիճակի զարգացման պլանի մշակում	Մինչև 15.09	Ղեկավարման շտաբ	
7	ՇՈ միջնորդական կազմի անհատական պլանների մշակում և հաստատման ներկայացում	Մինչև 28.09	ՇՈ միջնորդական կազմ	
8	ՇՈ ղեկավարման կազմակերպման սխեմայի մշակում	Մինչև 16.09	Ղեկավարման շտաբ	
9	ՇՈ փաստաթղթերի հաստատման ներկայացում	Մինչև 26.09	Ղեկավարման շտաբ	
	II. Ղեկավար և միջնորդական կազմի նախապատրաստում			
10	ՇՈՒ կազմակերպման և անցկացման փաստաթղթերի ուսումնասիրում	Մինչև 30.09	Ուսումնավարժության ղեկավար, Ղեկավարման շտաբ	
11	Միջնորդների հրահանգավորում	Մինչև 28.09	Ղեկավարման շտաբ	
	III. Ուսուցանվողների նախապատրաստում			
12	ՇՈ փաստաղթերի հետ ծանոթացում իրենց առնչվող մասով:	Մինչև 26.09	Ղեկավարման շտաբ	
13	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի արտակարգ իրավիճակներում գործելու պլանի ուսումնասիրում	Մինչև 14.09	Ղեկավարման շտաբ	
14	ԱԻ ոլորտին առնչվող իրավական ակտերի հետ ծանոթացում	Մինչև 14.08	Ղեկավարման շտաբ	
15	«Բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպման առանձնահատկությունները սողանքների ակտիվացման ժամանակ» թեմայով սեմինար պարապմունքի անցկացում	29.09	Ղեկավարման շտաբ	

ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ